



ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻ ԱՏԼԱՍ-ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ.— Հրա-
տարակվեց Հայկական ՍՍԻ գիտատեղեկատու կոմպլեք-
սային Ատլասը, որը կազմել են ռուսագրիկայի Գի-
տությունների ակադեմիայի ներկայացուցիչների հետ-
տույնի Աշխարհագրական սենտրոնի գիտական աշխա-
տողները: Ատլասը հանդիսանում է քարտեզագրական
և աշխարհագրական աշխատություն, սակայն առանց
վերապահության, այն կարելի է անվանել նաև Հա-
յաստանի 40-ամյա նվաճումների հանրագիտարան:

Ատլասը բաղկանում է 140 քարտեզներից: Առանձին
քարտեզների հետ նաև հարուստ ավելյալներով և բազմա-
կողմանիորեն ներկայացված են լրացուցիչ բնու-
թյան տարրեր՝ լրացուցիչ քարտեզներ, զանազան
ավելյալներ, դիագրամներ, գրաֆիկներ, պրոֆիլներ և
այլն:

Առանձնապես մանրամասն ուշադրություն է դարձված
կլիմայական, ագրոկլիմայական, ֆոնոլոգիական և
հողաբուսական ձաճկի քարտեզներին: Այս բաժինը
գյուղատնտեսության աշխատողներին համար մի հիա-
նայի ուղեցույց է: Այստեղ քարտեզների ձևով պատ-
կերված են այնպիսի երևույթներ, որոնք մինչ այժմ
կազմված կոմպլեքսային և մասնագիտական առաս-
ներում բոլորովին տեղի չեն գտել կամ նրանց վրա սոսկ
թուղթի կերպով է ուշադրություն դարձվել:

Այս քարտեզները ունեն պրակտիկ նշանակություն և
կարող են օժանդակել ռուսագրիկայի լաբորանտի կա-
տարվող գյուղատնտեսական ձեռնարկներին:

Պատմական քարտեզների բաժնում զետեղված են
հայ ժողովրդի դարավոր անցյալը պատկերող մի շարք
քարտեզներ, սկսած ուրարտական շրջանից մինչև մեր
օրերը: Այս բաժինը համեմատաբար փոքրածավալ է,
քան մյուսները:

Ներկա Ատլասը, բացի գիտական բարձր մակար-
դակից, ունի նաև տեխնիկական զեղեցիկ և անվորում:

ՄԱՏՆԵԱԴԱՐԱՆԻ ՆՈՐ ԶԵՆԱԳՐԱՐԸ.— Հայաստանի
Հին Անագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝
Մատենադարանի ֆոնդերի անցած տարի համարվեցին

180 նոր Անագրերով, որոնց վերաբերում են Ժ—ԺԹ
դարերին և արժանի են ձեռնարկի, գիտապատմա-
կան և աստվածաբանական հարցեր:

Ձեռագրերի մեծ մասը նվեր է ստացված Թուրքիայի,
ԱՄՆ-ի, Սիրիայի, Միավորված Արաբական Ռեպուբ-
լիկայի, Ռումինիայի հայ զաղութներից, ինչպես նաև
Սովետական Միության տարբեր քաղաքներից:

Ուշագրավ է միջնադարյան Անագրերից մեկը, որը
պարունակում է հայկական 150 առակ:

Նոր համալրումը ընդգրկում է Արիստոտելի «Մե-
տաֆիզիկա»-յի հայերեն թարգմանության արժեքավոր
ձեռագիրը: Լատիներենից «Ետ ասելոց» բնականաց-
վեցողությունը 1875 թվականին այն թարգմանել է
Ստեփանոս Լեհացին:

Մատենադարանի Անագրերի նոր համալրումը ան-
լափ արժեքավոր է: Այն ներկայացնում է հայ հին
պատմագիրների, բժիշկների, տիեզերագետների, փիլի-
սոփաների, մաթեմատիկոսների աշխատությունները,
որոնք վերաբերում են ժողովուրդների առևտրական,
տնտեսական և մշակութային կապերին, արտադրում
վաղուց անցած ժամանակների մարդկանց հայացքները,
գիտական տեսակետները:

Ներկայումս այդ ինքնատիպ գրադարանի գրապա-
հոցներում և հատուկ պահպաններում պահվում են
10 838 հին Անագրեր, այդ թվում 10 108-ը հայերեն,
738-ը՝ արաբերեն, պարսկերեն, հունարեն, վրացերեն,
հին սլավոներեն, լատիներեն, եբրայերեն և այլ լե-
զուներով:

ԲԱՆԱՍՏԵՂՄ ՎԱՀԱՆ ՄԱԼԵՋԱՆԻՆ ՆՎԻՐՎԱՄ ԵՐԵ-
ՎՈՒ.— Միայն ահա թանաթագի և հասարակական
գործիչ Վահան Մալեջյանի ծննդյան 90 և դրական
գործունեության 70-ամյակին էր նվիրված Երևանի
մտավորականության ներկայացուցիչների հորհրդա-
կան երկույթը, որ անդի ունեցավ փետրվարի 8-ին,
Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և
մշակութային կապի Հայկական ընկերության դահլի-
ճում:

Միյությունը հայ գրողներին նահապետին ուղղված դրվատանքի առաջին խոսքն ասաց ընկերության նահապետ Բերսարե Գրիգորյանը։

Այնուհետև դրականացեալ Գ. Ստեփանյանը զննուցեց Դորեյարի կյանքի ու դործունեության մասին։ Հայաստանի գրողների միության հանձնարարությամբ բանաստեղծ Ստեփան Տարոնցին հանգեալ եկավ Հորեյարին ուղղված ողջույնի շնորհ խոսքով։ Հորեյարին ողջունեցին նաև Մելիքն Մանուշյանը և Պատերիկ Մելյանը։

ՆԱԳԱՇ ԼՈՎՆԱԹԱՆԻՆ ՆՎԻՐՎԱՆ ԳԵՏԱԿԱՆ ՆԻՍՏ.— Հայ նշանավոր բանաստեղծ-աշուղ և Նկարիչ Նաղաշ Լովնաթանի հենց այս 300-ամյակին էր նվիրված Մանուշյանը և Գիտությունների ակադեմիայի Մանուշյանի անվան դրականության ինստիտուտի միացյալ գիտական Նիստը, որը հանդիմանեց ներածականով բացեց Մանուշյանի դիրքավորումը և նախկինում։ Նաղաշ Լովնաթանի կյանքն ու գրական ստեղծագործությունը թեմայով հետաքրքրական զննուցում կարողացաւ բանասիրական գիտությունների թեմայում։ Նաղաշյանը։

Նաղաշ Լովնաթանի ստեղծագործության լեզվական հարցերին էր նվիրված պրոֆ. Գ. Սեֆյանի զննուցումը։ Բանաստեղծի գործերը պարունակող, տարբեր ժամանակներում զրկված, տաղարանների մասին էր բանասիրական դիտությունների թեմայում։ Ա. Մանուշյանի հաղորդումը։

Նաղաշ Լովնաթանը հայտնի է ոչ միայն որպես քննարկական, խնդրող, խորատկան ու նրբորեն խորհրդող բանաստեղծությունների հեղինակ, այլև որպես օրմանակարիչ և դիմանակարիչ, օսական այդ գործերից միայն ընկերներն են պահպանվել։

Նիստի ընթացքում ուղարկված լավագույն նաև արվեստագետ Մ. Սարգսյանի «Նաղաշ Լովնաթանը և Լովնաթանյանների զարգացումը թեմայով զննուցումը, որն ուղեկցվում էր այդ զարգացման ներկայացուցիչների գործերի վերաբարդությունների և լուսանկարների ցուցադրումով։

Հետաքրքրական էր նաև Գրականության ինստիտուտի ավագ զիտաշխատող Մ. Ավդալյանի զննուցումը, որը նվիրված էր ժայիսի գրականության նախադասները ԺԶ-ԺԷ դարերի տարեգրության մեջ և Նաղաշ Լովնաթանին թեմային։

Նաղաշ Լովնաթանի և աշուղական պոեզիան թեմայով զննուցեց և Նաղաշ Լովնաթանի վերաբերող մի նորահայտ փաստ հաղորդեց գրականության ինստիտուտի ավագ զիտաշխատող Լ. Սահակյանը։

Գիտական Նիստի արդյունքներն ամփոփեց Գրականության ինստիտուտի ղեկավար Գուրգեն Լովնանը։

Մանուշյանի կազմակերպված ցուցահանդեսը եռօրյակ Նաղաշ Լովնաթանին էր նվիրված։ Այստեղ ցուցադրված էին Նաղաշ Լովնաթանի ձեռագրված Երոտթը և նրա շքեղությամբ պատկերող լուսանկարները։ Մեծ ջանքերով գործերի ձեռագիրն ու ավագի տաղարանները, տաղերի թարգմանությունները, նրա մասին եղած ուսումնասիրություններն ու հղվածները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՇՆԵՐԻ ՃՈՐՃԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.— Վերջերս Երևանում, Նկարիչների տանը, բացվեց Հայաստանի 43 նկարչական ստեղծագործությունների ցուցահանդեսը, որտեղ ներկայացվել էին 300 գործեր։ Մեր նկարիչները այդ ստեղծագործությունները կատարել են վերջին երեք տարիների ընթացքում, ինչպես Սովետական Միության ճաղացներում, այնպես էլ արտասահմանում կատարած շուրջապատկան ճանապարհորդությունների ընթացքում։

Ահա Նկարչության իր հեռավոր բուրգերով, անձայնաժիր շիկակարմիր անապատներով, սևամուս, ալպան և կոշիկում Արմեն Գրիգորյանի կտավներից մեկը։ Գեղեցիկ ավագը պատկեր է ներկայացրել, ձեռքի հակա գունդը։ Ավագի հատկանիշները կատարողն զարնվում են իրար, ասես ջանկարով հիմնականում անել հանդիպած, բայց անասան է հեռավոր բուրգը։ Անապատ է. կանգնել է ուժանակալ ֆիլլաճը, նրա պատկերը, շողից ճաղացած շրթունքները կարծես ասում են՝ ժամանակ է շնչել։ Նկարիչը հենց այդպես էլ վերնագրել է իր ստեղծագործությունը Գրիգորյանի լավագույն աշխատանքներից են նաև «Մեծ ճաղաց», «Նիստանապոլիսի եղիպատի» նկարները։

Անցնելով սրահից սրահ, մեկը մյուսից ավելի զգեցիկ, շնորհալի, մեղմ դուրսերով հաղցնված կտավները հիանալի են դիտողին։ Ահա աշխարհի յոթ հորաշարիներից մեկը՝ եղիպատական «Մեծ ճաղաց», որտեղից արարները, «Չգնահատված նկարիչ», հրեքն էլ Տ. Թոքմաչյանի վրձնի արդյունքը։

Սարգիս Արուստյանը իր ամերիկյան ապագործությունները վերաբարդել է «Եվանջելյան», «Նիստ», «Մեծ ճաղաց», «Մեծ ճաղաց», «Մեծ ճաղաց» և այլ կտավների վրա։ Ուշագրավ է նկարիչի «Նիստ» շրջանի վրձնարարի բարձրագույն թանկություն է լինում և թեմայից են հասնում նրա ահռելի վշտի արձագանքները։

Հետաքրքրություն էր դիտվում Լ. Ռուսկոյանի «Դեպի Բարա», Ե. Հերմանյանի «Փոքրիկ ընկերներ Բոսնիայից», Լ. Կոչյանի «Կոստանդնուպոլիսի գիշեր», Մ. Սոսոյանի «Հակա տաճարը Սոֆիայում», Լ. Մարգարյանի իտալական ընկերները, Ա. Գայնիցի «Սոֆի», Ա. Հունանյանի «Հին Բիզանս» և այլ գործեր։

ՄԱՆԿԱԿԱՆ ԿԱՆՑԱՆՈՒՄ ԿԱՆԱԿԱՆ ԼՈՐԵՆՑԱՆԸ.— Իրացավ Հայաստանի Հեռուկա մանկավարժական ինստիտուտի հայտը լեզվի ամբիոնի վարիչ Խաչատուր Կանայանի ծննդյան 80-ն յանկավարժական գործունեության 55-ամյակը։

Խ. Կանայանը, 1883 թվականին ավարտելով Գևորգյան ճեմարանի լրիվ դասընթացը, նվիրվում է մանկավարժության։ Նա իր գործունեությունն սկսել է հայրենի Իզմիրում, իսկ այնուհետև մոտ տասը տարի դասավանդել է Թիֆլիսի հայկական օրիորդաց Հովնանյան դպրոցում։

Խ. Կանայանը երկար տարիներ ավանդել է հայտը լեզու, դրականություն և գրաբար։ Նա ընդամենը գործունեություն է ծավալել Երևանի Բանասիրական, Պետական համալսարանում, Մանկավարժական, Հեռուկա մանկավարժական ինստիտուտներում և այլուր։

Մինչև հազար խորքը ներթափած լինելով մանկավարժության հանդեպ առած ծիրով, նա 55 տարի շարունակ բարձր է պահել իսկական ուսուցչի լուսավորչաժը, հայ մանուկների սովորեցնելով մեր հիանալի մայրենի լեզուն:

Կանայանը հասցրել է քաղաքի մաներ, որոնք ներկայումս Հայաստանի տարբեր հաստատություններում ծաղկում են հասարակական-քաղաքական, գիտական-մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներ, և երախտագիտության խորին զգացումներով ուղեւնում են իրենց ուսուցչի հորեկանը:

Կանայանն զբաղվել է նաև զբանք, քննադատական գործունեությամբ: Նրա առաջնակարգ արժեք ունեցող գործերից մեկն է Քվիտի իսահակյանի լեզուն աշխատությունը: Երևա առաջին զործն էր մեծ բանաստեղծի ստեղծագործությունը լեզվաբանական տեսանկյունով ուսումնասիրելու ուղղությամբ: Խ. Կանայանը պրոֆ. Մ. Մկրտչյանի, Ա. Բակունցի և Գ. Սարյանի հետ կազմել է նաև հայոց լեզվի դասագրքեր հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ դասարանների համար:

Հայաստանի կառավարությունը, գնահատելով Խ. Կանայանի բարեխղճ և անբասիր աշխատանքը, ըստ արժանվոյն գնահատել է նրան:

Վաստակավոր մանկավարժը, հակառակ իր առաջացած տարիքին, այսօր ևս մեծ եռանդով ու հանդուրժող շարունակում է իր բեղուն գործունեությունը:

ԹԱՅՈՒՆ ԱԼԹՈՒՆՑԱՆԻ ՄՆԵՆԴԱՆ 60-ԱՄՅԱԿԸ.—

Մեր ժողովուրդը երախտագիտության խորին զգացումով վերջերս նշեց սովետահայ երաժշտական մշակույթի ակնավոր գործիչ, Հայկական ՄՍՌԴ ժողովրդական արտիստ, Հայկական ժողովրդական երգի ու պարի վաստակավոր անսամբլի զեղարվեստական ղեկավար Թայումյ Ալթունյանի ծննդյան 60 և երաժշտական ստեղծագործության բեղմնավոր գործունեության 40-ամյակը:

Ուսման և ստեղծագործական պրպտումների երկար և դժվարին ճանապարհ է անցել Թ. Ալթունյանը՝ սաղանցարական անփառունակ կյանքից մինչև ժողովրդական արտիստի և կոնսերվատորիայի պրոֆեսորի բարձր ու պատվավոր կոչումը: Այդ ճեղք է կյանքի և հարազատ ժողովրդի գոյությունը երաժշտության ճշգրիտ ընկալման, իրական արվեստի ճանաչողության, զեպի զեղեցիկն ու կատարյալը տանող մի ուղի:

Ալթունյանի հայացքը միշտ ուղղվել է դեպի հարողատ ժողովրդի երգառատ գանձարանը, որտեղից մեղվի նման հյութեր է քաղել իր հեռագա ստեղծագործական և կատարողական գործունեության համար: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Թուրքիան յաթաղանից ազատվելով, Ալթունյանը երևան է ապաստանում և երաժշտական ակադեմիայում իր առաջին ուսուցիչներն է ունենում Ռ. Մեխիյանին և Սպ. Մեխիյանին: Ապա իր երաժշտական հրմուռությունը խորացնելու համար սովորում է Լենինգրադի կոնսերվատորիայում:

Գոռնա ուսանողական տարիներին Ալթունյանի տաղանդը դրսևորվել է հատկապես երգախմբային տղվեստի մեջ:

Ստեղծագործական խելագումաների, պրպտումների ու խոհականություն տառնյակ տարիներ են անցել դրանից հետո: Անխախտ է մնացել նրա մեջ երիտասարդական ավյունը և ձգտումը դեպի նորը, զեղեցիկն ու ճշմարիտը: Ստեղծագործական վառ երևակայություն, միշտ անբավական դատած նոր հնարքներ, միշտ անհանգիստ, միշտ օրոհող, նախքան ճաշակ, երանքների խեղացի համադրող՝ ահա Թ. Ալթունյանը բնորոշ դարձնաստությունները:

Միլիոնավոր արտեր հուզող մեր ժողովրդական երգի ու պարի անսամբլի և նրա զեղարվեստական ղեկավար Թ. Ալթունյանի 25 տարվա բեղմնավոր գործունեությունը աշխարհի համարյա բոլոր լեզուներով գնահատվել է և մեծարանքի արժանացել:

Անվանի արվեստագետն ապրում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանը:

Հաջողություն վարպետին և նոր նվաճումներ:

ՄՈՎՍՍԵ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԱՇԽԱՐՀԱՐԱՐ.—

Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս ընծայեց պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» ակադեմիկոս Ստեփան Մայրատյանի աշխարհարար թարգմանության նոր հրատարակչությունը: Գիրքը բացվում է Թարգմանչի ներածականով: Թարգմանչի կոմիտե արվում են նաև ծանոթագրություններ: Հատորի վերջում տպագրված է հավելված, ժամանակագրական աղյուսակներ Խորենացու պատմության Բ և Գ գրքերի համար: Գիրքը լույս է տեսել 20 000 տպագրականով:

ԽԱՉԱՏՈՐ ԱՐՈՎԱՆԻ ԵՐԿԻՐԻ 10-ՐԴ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՀԱՏՈՐԸ.—

Վերջերս ավարտվեց հայ գրականության լուսավորչի Խաչատուր Արուստիանի երկերի լիակատար ժողովածուի 10 հատորյակի ակադեմիական հրատարակչությունը: Այս հատորները լույս են տեսել 1947 թվականից սկսած, մեծատաղանդ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի խմբագրությամբ:

Հրատարակչության մեջ ի մի է հավաքված մեծ լուսավորչի թողած գրական, գիտական և մանկավարժական հարուստ ժառանգությունը:

10-հատորյակի տեքստերը պատրաստվել են Արուստիանի ձեռագրերի հիման վրա, որոնք զրկված են հայերեն (գրաբար-աշխարհարար), ռուսերեն, գերմաներեն և անգլերեններեն և պահվում են Նրնանի, Լենինգրադի, Քրիլիսի, Տարգուի և Կադանի արխիվներում:

Արուստիանի երկերի մեծագույն մասը մնացել էր անտիպ և առաջին անգամ լինելով դրանք այս հրատարակչության ներկայացվում են հասարակության: Մասնավոր ուշադրության արժանի են հեղինակի ովերթ Հայաստանի վեպի արձակ և լավածո սեպեր վարիանտները, ուղեորություն դեպի Անիի ավերակները վերնագրով ռուսերեն ճանապարհորդական նոթերը, «Գյուլական տների կառուցվածքը» գերմաներեն ազգագրական ուսումնասիրությունը, Հայաստանի և հայ ժողովրդի տեսնական և մշակութային վիճակը քարեկվելու առթիվ կառավարության ներկայացված նախագիծը և բազմաթիվ ցուրղ չհրատարակված այլ վավերագրեր:

Անկաղծմիական այս Հրատարակությունը կարևոր նշանակություն ունի այն միայն Արտվյանի կյանքի, ստեղծագործության և զրահայն հասարակական հայացքների, այլև հայ նոր գրականության և մշակույթի ակզբնավորության և զարգացման պատմության ուսումնասիրության համար:

ԳԱՐՐԻՆԷՆՆԻ ՍՈՒՆՆՈՒՆԻՍՏԱՆԻ ԵՐԿՐՐՐ ՎԵՐՋԻՆ ԼԱՏՏՐԸ.— Վերջերս լույս տեսավ Գարրինի Սունդուկյանի երկերի անկաղծմիական Հրատարակության քառահատորյակի վերջին հատորը:

Քառահատորյակը ամփոփում է մեծ դրամատուրգի գրական ողջ ժառանգությունը: Առաջին, երկրորդ և երրորդ հատորները ընդգրկում են Գ. Սունդուկյանի բոլոր կոմիդիաները իրենց տարբերակներով, որոնց մեծ մասը առաջին անգամ է ապագրվում:

Չորրորդ հատորում դետեղված են Սունդուկյանի հայերեն, վրացերեն, ռուսերեն և ֆրանսերեն նամակները, ուղղված ինչպես իր հարազատներին, այնպես էլ ժամանակի նշանավոր գրական-հասարակական գործիչներին: Այդ նամակները բացահայտում են հայ անկաղծմի դրամատուրգի կապերը և նվիրույթի մի շարք դրողներին և արվեստագետներին, ինչպես Վիկտոր Լյուդովի, Դյումա ողոր, Սարգսի, Շենյանտ Ռոսսի, Յուրի Վենյովսկու և ուրիշների հետ:

Ընթերցողներին առաջին անգամ են ներկայացվում նաև մի շարք անտիպ հոդվածներ, ինչպես և Սունդուկյանի անտիպ դիսերտացիան, որը նվիրված է իրանական պոեզիայի տաղանդավորությանը: Այլ լեզուներով գրված նյութերը ներկայացված են իրենց թարգմանություններով:

Տաղանդավոր դրամատուրգի ստեղծագործության մեջ ցայտուն արտացոլում են գտնվում հայ և վրացի ժողովուրդներին զարավոր բարեկամությունը, կենցաղը, նիւտու կացը և ժողովրդական բանահյուսությունները:

Սունդուկյանի երկերի անկաղծմիական հրատարակության ավարտը կարևոր նշանակություն է կրողը մշակութային կյանքում:

ԳԵՐԱՍԱՆ ՎԱՂԱՐՇ ՎԱՂԱՐՇԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԸ.— Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանը վերջերս ստացավ նշանավոր հայ թատերական գործիչ

ՍՍՐ Ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանի անձնական արխիվը: Այն հանձնել են Վաղարշ Վաղարշյանի հարազատները:

Այստեղ են անկաղծմի արվեստագետի նամակները, խաղացած դերերի մեջնագրված տեղագրերը, հոդվածներն ու հյույժների սղագրությունները, հուշերը, ունեցած գրքերը, անագրի և անագրի ստեղծագործությունները, հրավերառուները, աֆիշաները, գրքեր և այլ նյութեր, թվով ավելի քան 3 500 կտոր:

Վաղարշյանը իր աշխատանքային գործունեության ընթացքում արտիստիկա սերտ կապեր է ունեցել հայ և ռուս բազմաթիվ արվեստագետների, մշակույթի գործիչների, գրողների, դերասանների հետ: Այդ մասին են պատմում նրա նամակները, թվով շուրջ 400:

Արխիվում կան 24 պիսներ ու սցենարներ, որոնց մի մասը անտիպ է: Անագրի բայց ավարտուն վիճակում են նրա «Արա զեղեցիկ և Շամիրամ», «Արդու», «Համիդ», «Եղիսան» պիսները: Այստեղ են նաև «Ընկերներ», «Բարեկամներ» և նաև զբոս առաջին զուտներին հեղագրերը: Մեծ թիվ են կազմում նաև Վաղարշյանի անձնական գրքերը: Թանգարանում են գտնվում նաև անձնական իրերը:

Թանգարանի աշխատանքները հետևանքով են և՛ իր Վաղարշ Վաղարշյանի արխիվի դիտական ուսումնասիրության և դասավորման:

ԿՈՍՊՈԼԻՏԱՆԻ ԳԱՆՆԻՆԷՆԻ ՂԱԶԱՐՇԱՆԻ ԼԻՇԱՏԱԿԱՆ ՆՎԻՐՎԱՐՇ ԵՐԿԻՎ.— Հայ լավագույն երգաստեղծ, կոմպոզիտոր Դանիել Ղազարյանի հիշատակին էր նվիրված վերջերս կոմպոզիտորների տանը կազմակերպված երեկոն:

Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ, ռեպուբլիկայի արվեստի վաստակավոր գործիչ էդ. Միրզոյանի բացման խոսքից հետո, Դ. Ղազարյանի կյանքին ու ստեղծագործության մասին բովանդակալից զեկուցում կարդաց երաժշտագետ Մ. Բրուստյանը:

Երեկոյի վերջում տրվեց համերգ Դանիել Ղազարյանի ստեղծագործություններին:

